

Արձանագրություն N 1  
«ԿԴՄՀՀ-ՊԸՕԶԲ-17/2» պարզեցված ընթացակարգի միջոցով  
գնում կատարելու հանձնաժողովի բացման նիստի

Պատվիրատուի հասցեն՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1

«17» «փետրվար» 2017թ.

ժ 11:00<sup>1</sup>

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝

Սեյրան Զորոդյան- պահեստապետ

Արթուր Գասպարյան- տնօրենի օգնական

Յուլյա Սարգսյան- սպասարկման ծառ. պետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

**I. Պարզեցված ընթացակարգի միջոցով գնում կատարելու հայտերի բացման մասին**

(Արման Աբրահամյան)<sup>2</sup>

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

|                                        |                                                                                                  |
|----------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------|
| 1. «Լիգա-Տեք» ՍՊԸ                      | Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 28/2, հեռ.՝ 010 500-542                                                |
| 2. «Ֆլորենս» Աճուրդի տուն ՍՊԸ          | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ազանթագեղոս 6/1, հեռ.՝ 010 56 -45 -13                                       |
| 3. «Էյ Էնդ Էմ Ֆայնենշլ Քոնսալթինգ» ՓԲԸ | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0014, Ազատության պող. 24/19, հեռ.՝ +374 10 23 40 01                         |
| 4. «Արալ» ՍՊԸ                          | Հասցե՝ ք. Երևան, Երվանդ Քոչարի 21, բն. 18, հեռ.՝ +374 99 53 89 79                                |
| 5. «Ասատրյան» ՍՊԸ                      | Հասցե՝ ք. Երևան 0010, Սախարով բիզնես կենտրոն, Նալբանդյան 48/1, 5-րդ հարկ, հեռ.՝ +374 60 53 23 23 |

դ/ մասնակիցների կողմից առաջարկված գները ներկայացված են կից հավելված N 1-ում:<sup>3</sup>

2. Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով (ծանուցումով) սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում են՝ «Լիգա Տեք» ՍՊԸ-ի, «Էյ Էնդ Էմ Ֆայնենշլ Քոնսալթինգ» ՓԲԸ, «Ասատրյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, «Արալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էր հավելված 3.2 (հայտարարություն մասնագիտական փորձառության մասին) և հավելված 3.5 (հայտարարություն ֆինանսական միջոցների մասին), իսկ «Ֆլորենս» Աճուրդի տուն ՍՊԸ-ի գնային առաջարկում կա թվաբանական սխալ կազմակերպությունը ԱԱՀ վճարող չէ, իսկ ինքնարժեքի և շահույթի հանրագումարը չի համընկնում առաջարկված ընդհանուր գնի հետ, ինքնարժեքը 2700000(երկու միլիոն յոթ հարյուր հազար), շահույթը

<sup>1</sup> Ըստ առաջին նիստի հանձնաժողովի որոշման՝ ընթացակարգի հայտերի բացման նիստը հրավիրել շրջանակային համաձայնագիր կնքած մասնակիցներին ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթերորդ աշխատանքային օրը:

<sup>2</sup> Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը:

<sup>3</sup> Եթե հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկությունները հնարավոր չէ ներկայացնել նույն արձանագրության միջոցով, թույլատրելի է կազմել հավելված, որը կդառնա տվյալ արձանագրության անբաժանելի մասը, ըստ տվյալ օրինակի:

20000(չորս հարյուր հիսուն հազար), առաջարկված ընդհանուր գինը ներկայացված է 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) 3150000 (երեք միլիոն հարյուր հիսուն հազար) դրամի փոխարեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:<sup>4</sup>

3. Ընդունել ի գիտություն, որ.

- բանակցություններ չեն վարվել<sup>5</sup>,
- հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա նախնական տվյալներով.

1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել.

«Ասատրյան» ՍՊԸ -ն՝ թիվ 1 չափաբաժնի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:<sup>6</sup>

5. Հանձնաժողովը որոշեց՝ համաձայն ՀՀ Կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 47-րդ կետի

- Հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

- Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

-համաձայն ՀՀ Կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 49-րդ կետի

Գնման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել ոչ ուշ քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ժ. 17:00-ին: Նիստի անցկացման վայրը նույն հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:<sup>7</sup>

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արման Աբրահամյան

Անդամներ՝

Սեյրան Զորոդյան

Արթուր Գասպարյան

Յուլակ Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

<sup>4</sup> Ըստ հանձնաժողովի անդամների ներկայության:

<sup>5</sup> Սա նշվում է այն ժամանակ երբ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկությունների միջև հավասարություն չի եղել:

<sup>6</sup> Ըստ 13-րդ կետի:

<sup>7</sup> Ըստ 13-րդ կետի:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Շահերի բախման բացակայության մասին**

ք. Երևան

«17» «փետրվար» 2017թ.


«ԿԴՄՀՀ-ՊԸԾԶԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի միջոցով գնում կատարելու ՄՀՀ-ի կարիքների համար հիմնական միջոցների գույքագրման ծառայության ձեռքբերման նպատակով ձևավորված գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյանը, անդամներ՝ Սեյրան Զորողյանը, Արթուր Գասպարյանը, Յուլակ Սարգսյանը, նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արման Աբրահամյան 

Անդամներ՝

Սեյրան Զորողյան 

Արթուր Գասպարյան 

Յուլակ Սարգսյան 

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան 

## Գնային առաջարկներ

## «Լիզա -Տեք» ՍՊԸ

| Չափա-<br>բաժինների<br>համարները | Ծառայության<br>անվանումը                            | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ*    | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/      |
|---------------------------------|-----------------------------------------------------|-----------|---------|---------|---------------------------------------------------------|
| 1                               | 2                                                   | 3         | 4       | 5       | 6=3+4+5                                                 |
| 1                               | «Հիմնական միջոցների<br>գույքագրման<br>ծառայություն» | 2 800 000 | 450 000 | 650 000 | 3 900 000<br>(երեք միլիոն ինը<br>հարյուր հազար)<br>դրամ |

## «Ֆլորենս» աճուրդի տուն ՍՊԸ

| Չափա-<br>բաժինների<br>համարները | Ծառայության<br>անվանումը                            | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/                                                                                                                                                                                    |
|---------------------------------|-----------------------------------------------------|-----------|---------|------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1                               | 2                                                   | 3         | 4       | 5    | 6=3+4+5                                                                                                                                                                                                                               |
| 1                               | «Հիմնական միջոցների<br>գույքագրման<br>ծառայություն» | 2 700 000 | 450 000 | -    | 3 150 000<br>(երեք միլիոն հարյուր<br>հիսուն հազար) դրամ,<br>մասնակցի կողմից<br>ներկայացրած գնային<br>առաջարկում կար<br>անճշտություն և<br>ինքնարժեքի և<br>շահույթի գումարը<br>նշված էր 3200000<br>(երեք միլիոն երկու<br>հարյուր հազար) |

## «Էյ Էնդ Էմ Ֆայնենշլ Քոնսալթինգ» ՓԲԸ

| Չափա-<br>բաժինների<br>համարները | Ծառայության<br>անվանումը                            | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/                  |
|---------------------------------|-----------------------------------------------------|-----------|---------|------|---------------------------------------------------------------------|
| 1                               | 2                                                   | 3         | 4       | 5    | 6=3+4+5                                                             |
| 1                               | «Հիմնական միջոցների<br>գույքագրման<br>ծառայություն» | 5 100 000 | 765000  | -    | 5865000<br>(հինգ միլիոն ութ<br>հարյուր<br>վաթսուհինգ հազար)<br>դրամ |

«Արալ» ՍՊԸ

| Չափա-<br>բաժինների<br>համարները | Ծառայության<br>անվանումը                            | Ինքնաթիք  | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/               |
|---------------------------------|-----------------------------------------------------|-----------|---------|------|------------------------------------------------------------------|
| 1                               | 2                                                   | 3         | 4       | 5    | 6=3+4+5                                                          |
| 1                               | «Հիմնական միջոցների<br>գույքագրման<br>ծառայություն» | 2 000 000 | 890 000 | -    | 2 890 000<br>(երկու միլիոն ութ<br>հարյուր իննսուն<br>հազար) դրամ |

«Ասատրյան» ՍՊԸ

| Չափա-<br>բաժինների<br>համարները | Ծառայության<br>անվանումը                            | Ինքնաթիք  | Շահույթ | ԱԱՀ*    | Առաջարկված<br>ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/                                  |
|---------------------------------|-----------------------------------------------------|-----------|---------|---------|-------------------------------------------------------------------------------------|
| 1                               | 2                                                   | 3         | 4       | 5       | 6=3+4+5                                                                             |
| 1                               | «Հիմնական միջոցների<br>գույքագրման<br>ծառայություն» | 2 500 000 | 387 000 | 577 400 | 3 464 400<br>(երեք միլիոն չորս<br>հարյուր վաթսուչորս<br>հազար չորս հարյուր)<br>դրամ |